Զեկույց

Հանրակրթության ոլորտում ՀԸԳՀ կիրարկման մշտադիտարկում. բարեփոխումների որակական և քանակական ուսումնասիրության

Հեղինակ՝ Լարիսա Մինասյան

Երևան 2025

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես հեղինակը՝ Լարիսա Մինասյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3

Նախապատմություն 4

Մեթոդաբանություն 6

ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի և կառավարության հիմնական քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն 6

Բարեվարքությունը կրթական համակարգում
Կրթության որակ
Որակյալ կրթության հասանելիություն և հավասարություն

Ելակետ 9

Արդյունքներ 12

Բարեվարքությունը կրթական համակարգում
Կրթության որակ (դասավանդում և ուսումնառություն)
Որակյալ կրթության հասանելիություն և հավասարություն

Ամփոփում 19

Առաջարկություններ 20

Երախտիքի խոսք 21

Հապավումների ցանկ

ԳԹԿ	Գնահատման եւ թեստավորման կենտրոն
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԿԶՆԱԿ	Կրթության զարգացման և նորարարության կենտրոն
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՊԾ	Կրթության զարգացման պետական ծրագիր
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԲՀՀ	Բաց հասարակության հիմնադրամ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
TIMSS	Միջազգային մաթեմատիկայի և գիտության միտումներ
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ Երեխաների հիմնադրամ
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն
ՀԲ	Համաշխարհային բանկ

Ամփոփագիր

Կրթության հասանելիությունն ու որակը համակարգային կերպով խաթարվել են 2018 թվականի հեղափոխությանը նախորդող տասնամյակների ընթացքում, ինչը հանգեցրել է ուսումնառության աղքատության (ոչ ամբողջական և լիարժեք) աննախադեպ աճի: Թեև Հայաստանի կրթական բարեփոխումներում առաջընթաց է արձանագրվում, սակայն դրանք դեռևս բավարար չեն ***բարեվարքության,*** կրթության հասանելիության ***և որակի*** *ապահովման տեսանկյունից՝ թե՛ ռազմավարության, թե՛ կիրարկման մակարդակում: Կառավարության* ***կենտրոնացված*** *մոտեցումն առաջացնում է ձևական համապատասխանության վտանգ, այլ ոչ թե բովանդակային բարելավում: Առանց համակարգային բարեվարքության բացը լրացնելու և իրական հաշվետվողականություն ապահովելու մեխանիզմների, կրթության կայուն առաջընթացն անիրագործելի կլինի: Որակյալ համակարգի հասանելիությունը բարելավելու համար կառավարությունը պետք է հաշվի առնի ուսումնառության աղքատության սոցիալական չափումը և ձեռնարկի այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն որակյալ կրթության հավասար հասանելիություն բոլոր սոցիալ-տնտեսական շերտերի համար:*

Նախապատմություն

Հայաստանի ներկայիս կրթական համակարգը բազմամյա, լայնածավալ բարեփոխումների արդյունքն է: Այդ բարեփոխումներն ունեն հավակնոտ և բազմաչափ օրակարգեր:[1] Այս բարեփոխումներն ուղղված էին համակարգի հիմնահարցերին՝ ներառյալ կառավարումը, ֆինանսական կառավարումը, ուսումնական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների մասնագիտական զարգացումը և դասավանդման մեթոդաբանությունները: Ուստի, ներկայիս համակարգը հասկանալու և բարեփոխումների օրակարգը և դրանցով նախատեսված փոփոխությունները պատշաճ կերպով գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել բարեփոխումների նախապատմությունը: Չնայած հավակնոտ լինելուն՝ այս բարեփոխումները իրականացվել են հաջորդաբար՝ չտալով բավարար ժամանակ համակարգի արդյունավետության և ուսումնառության արդյունքների վրա դրանց ազդեցությունը պատշաճ կերպով գնահատելու համար:

Ամենամեծ հետևանքներն ունեցած բարեփոխումներն իրականացվել են 2018 թվականի հեղափոխությունից առաջ՝ մի ժամանակաշրջան, որը ստվերված էր համակարգային

[1] Primarily these are the World Bank's education loan programs: Education Quality and Relevance Project, 2004, Second Education Quality and Relevance Project, 2007, Education Improvement Project 2014, Additional Funding for Armenian Education Improvement project – still active. Available at https://projects.worldbank.org/en/projects-operations/projects-list?countrycode_exact=AM&title=Armenia&os=0 . Other large-scale projects were implemented through grants from USIS, ADB.

կոռուպցիայով և պետական հաստատությունների նկատմամբ գործադիր իշխանության անհարկի վերահսկողության ամրապնդմամբ: Լինելով առանցքային ոլորտներից մեկը՝ կրթական համակարգը հայտնվել էր ժամանակի իշխանությունների խիստ վերահսկողության ներքո՝ օգտագործելով թե՛ ֆինանսական, թե՛ քաղաքական օգուտներ ստանալու նպատակով: Հարդյունս, կառավարման ժողովրդավարացմանը և ոլորտային կառավարման բարելավմանը միտված բարեփոխումները, փոխարենը, հանգեցրել են հանրային կյանքի ամենակոռումպացված ոլորտներից մեկի ստեղծմանը: Նմանապես, դասավանդման և ուսումնառության արդիականացմանն ու որակի բարձրացմանն ուղղված բարեփոխումները մեծապես ձախողվել են, քանի որ համակարգում արձանագրվել է աննախադեպ աստիճանի ուսումնառության աղքատություն:

Տևական մտաշահարկող բարեփոխումները հանգեցրել են համակարգի քայքայմանն ու աղքատացմանը՝ լրջորեն ազդելով կրթության որակի և հասանելիության վրա: Համատեքստը հասկանալու համար հարկ է դիտարկել հետևյալ տվյալները. 2019թ. Հայաստանում ուսումնառության աղքատությունը կազմել է 35%, ինչը 21.7%-ով ավելի վատ է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշը:[2] 2003-2015թթ. մեծացել է սովորողների առաջադիմության սոցիալ-տնտեսական կարգավիճակի (ՍՏԿ) խազվածքը: Աղքատության շեմից ցածր ապրող սովորողները միջնակարգ դպրոցում արդեն ավելի վատ ակադեմիական առաջադիմություն են ունեցել, ինչը զգալիորեն ազդել է նրանց ապագա կրթական և տնտեսական հնարավորությունների վրա և սահմանափակել նրանց սոցիալական շարժունակությունը: 2019թ. TIMSS-ի (Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումների հետազոտություն) արդյունքների վրա հիմնված Հայաստանի կրթական համակարգի ուսումնասիրությունը3 պարզել է, որ այն համեմատաբար անարդյունավետ է տարբեր ՍՏԿ ծագում ունեցող սովորողներին սպասարկելու հարցում՝ ի համեմատ տարածաշրջանի այլ երկրների:

Տեղական և միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ) և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան (ԲՀՀՀ), ինչպես նաև «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ)[4] կողմից

[2] Երկրում ուսումնական աղքատության ակնարկ, 2019 https://www.worldbank.org/en/topic/education/brief/country-learning-poverty-briefs ՈՒԱ 2019

[3] Դանիել Կարո, Ջիա Հե. Հավասարությունը կրթության մեջ Հայաստանում. TIMSS 2003-2015թթ. ապացույցներ, ԲՀՀ հրապարակում: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://eera-ecer.de/ecer-programmes/conference/27/contribution/53576

[4] ԹԻՀԿ, Կոռուպցիայի համաշխարհային զեկույց, 2008թ., https://transparency.am/hy/media/news/article/976; «Ասարեզ» լրագրողների ակումբ https://asparez.am/project/jca-tiac-usaid/; Համայնքային ֆինանսիստների միավորման կողմից Երևանի

իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատել են, որ կոռուպցիան և համակարգային բարեվարքության պակասը եղել են անկման հիմնական պատճառները և խոչընդոտել բովանդակային բարելավումներին՝ չնայած բարեփոխումների վրա ծախսված վարկային և դրամաշնորհային միլիոնավոր դոլարների:: Մասնավորապես, այս ուսումնասիրություններն ընդգծել են համակարգի նկատմամբ գործադիր մարմնի գերակշիռ վերահսկողությունը, որն օգտագործվել է ընտրությունների ժամանակ՝ ըստ քաղաքական նպատակահարմարության: Դրանք նաև բացահայտել են մանիպուլյացիաներ և չարաշահումներ դասավանդման և ուսումնառության որակի գնահատման գործում, ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրման, ոչ պատշաճ դասավանդում նեպոտիզմ և ակադեմիական բարեվարքության բացակայություն, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտում: Բարեվարքության մի շարք վերլուծություններ բացահայտել են հանրակրթության ոլորտում հիմնական խախտումները, այդ թվում՝ դասարանի ուսուցիչների կողմից մասնավոր կրկնուսուցումը, ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրումն և դրա շահարկումը, համակարգի քաղաքականացված լինելը և անձնակազմի նշանակման և ազատման ընթացակարգերի չարաշահումները:

Հաշվի առնելով կրթական համակարգի վերաբերյալ առկա մեծաթիվ ապացույցները և դրա նկատմամբ հանրային անվստահության բարձր մակարդակը, որն արտացոլվել է ԹԻՀԿ հարցումներում, ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը հիմնականում կենտրոնանում էր կրթության և առողջապահության ոլորտների վրա:[5] Այդուհանդերձ, ԹԻՀԿ-ի հետագա գնահատումը ցույց է տվել, որ հարցվածների միայն 20%-ն էր կարծում, որ միջոցառումներն արդյունավետ են եղել:[6] Հետևաբար, շարունակվող կոռուպցիան և համակարգային բարեվարքության պակասը շարունակել են քայքայել կրթական համակարգը և խաթարել որակն ու հավասարությունը՝

քաղաքապետարանի կողմից դպրոցների ֆինանսավորման վերաբերյալ զեկույցները հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.osf.am/wp-content/uploads/2015/04/Eng_CFOA-brief.pdf;
«Հետք» հետաքննական լրագրողների միություն, https://hetq.am/hy/news/75938/varkayintsragri-vtangavor-pauzan-avag-dprocneri-himnanorogman-tsragiry-karox-e-kisatmnal.html/;
Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում, ՏՀԶԿ, 4-րդ մշտադիտարկում

https://www.oecd.org/corruption/acn/oecd-acn-armenia-4th-round-monitoring-report-july-

2018-eng.pdf?fbclid=IwAR2AXRWaTLsljQCVCWTcsH-

4NBpztvHAyrhBbGrSwUPo1y76JPQ7mwMzVnY; Միլովանովիչ և այլք (2016), Կրթության ոլորտում բարեվարքության ամրապնդում, Կիրառական քաղաքականության կենտրոն

[5] Հայաստանի Հանրապետության 2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն

[6] ԹԻՀԿ զեկույց «Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մշտադիտարկում», հասանելի է հետևյալ հղումվէ՝ www.transparency.am

միաժամանակ սպառելով դրա մասնագիտական և նյութական հիմքը՝ ամրապնդելով արատավոր շրջանը:

Ամփոփելով՝ ՀԸԳՀ ստորագրման դրությամբ կրթական համակարգի բարեվարքությունը պետք է վերականգնվեր՝ արդյունավետ և որակյալ կրթության հասանելիությունը ապահովելու համար: Ուսումնառության աղքատության մակարդակը պահանջում էր թիրախային և չափելի միջոցառումներ՝ ապահովելու, որ ցածր առաջադիմությամբ սովորողները ձեռք բերեն կրթական գործընթացին վերաինտեգրվելու համար անհրաժեշտ նվազագույն հմտություններն ու գիտելիքները:

Մեթոդաբանություն

Սույն մշտադիտարկման շրջանակը ներառում է 2022-2024թթ. իրականացված բարեփոխումները հանրակրթության ոլորտում՝ ՀԸԳՀ երեք հիմնական պարտավորությունների կատարման ուղղությամբ: Խնդրո առարկա հիմնական օրակարգային բարեփոխումներն են՝ Կրթության զարգացման պետական ծրագիրը (ԿԶՊԾ), Հակակոռուպցիոն ռազմավարությունը և Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը՝ դրանցից բխող համապատասխան գործողությունների ծրագրերով: Վերլուծվել են նպատակներն ու խնդիրները, գնահատվել է դրանց համապատասխանությունը ակնկալվող վերջնարդյունքներին և պարտավորություններին:

Մշտադիտարկման ընթացքում սահմանվել են մուտքային (ելակետային) ցուցանիշները՝ ուսումնասիրելով մշտադիտարկման ժամանակահատվածից առաջ պարտավորություններին վերաբերող ոլորտներում իրականացված բարեփոխումները: Բացի այդ, հավաքագրվել է տեղեկատվություն մշտադիտարկման ենթակա վերջնարդյունքների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը ստացվել է կրթության ոլորտի վերաբերյալ նախորդ ուսումնասիրություններից, կառավարության զեկույցներից, վերահսկող մարմինների զեկույցներից և տեղական ու միջազգային փորձագիտական վերլուծություններից: Հաշվետվության մեջ նկարագրվում են ելքային ցուցանիշներ (տե՛ս Ելակետ)՝ հիմնվելով գործողությունների ծրագրով սահմանված արդյունքների և կատարողականի թիրախների վրա, ըստ դրանց առկայության: Այն դեպքերում, երբ կատարողականի թիրախներ առկա չեն, հաշվետվությունը հիմնվել է լավ կառավարման չափորոշիչների և ուսումնական առաջադիմության տվյալների վրա, որոնք գրանցվել են ինչպես ազգային (ԳԹԿ, դպրոցների ինքնագնահատման զեկույցներ), այնպես էլ միջազգային (TIMSS) մակարդակով:

Տեղեկատվություն հավաքագրելու և փորձագիտական կարծիքները ստուգաճշտելու նպատակով անցկացվել են հարցազրույցներ պետական պաշտոնատար անձանց, գործող մասնագետների, կրթության փորձագետների, վերահսկող մարմինների ներկայացուցիչների և բարեփոխումների մշակման և իրականացման գործում կառավարությանն օժանդակող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այս հարցազրույցների համար մշակվել են հատուկ հարցաթերթիկներ, ինչպես նաև պաշտոնական հարցումներ են ուղարկվել համապատասխան պետական գերատեսչություններին:

Փաստացի արդյունքները համեմատվել են սահմանված նպատակների հետ, և եզրակացություններ են արվել, որոնք հիմք կծառայեն քաղաքականության մշակողների, ոլորտի մասնագետների և ԵՄ-ին ուղղված առաջարկությունների համար:

Արդյունքները քաղաքականության մշակողներին փոխանցվել են տարբեր ձևաչափերով՝ ներառյալ համապարփակ զեկույցը և կոնկրետ պարտավորությունների վերաբերյալ թիրախային ամփոփագրերը:

ՀԸԳՀ, ճանապարհային քարտեզի և կառավարության հիմնական քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) ստանձնած կրթական բարեփոխումների պարտավորությունները ամփոփված են 17-րդ գլխի 94-րդ, 94(բ) և 95-րդ հոդվածներում:[7] Մասնավորապես, Կողմերը պարտավորվում են արդիականացնել կրթության և վերապատրաստման համակարգերը, բարելավել որակը, վերաբերելիությունը և հասանելիությունը կրթության բոլոր աստիճաններում՝ վաղ մանկության կրթությունից և խնամքից մինչև միջնակարգ և դպրոցական կրթություն՝ ապահովելով թափանցիկություն և նպաստելով երիտասարդների ակտիվ մասնակցությանը հանրային կյանքին:

Այս պարտավորությունների իրականացման միջոցառումները ավելի մանրամասն մշակված են ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում: Դրանք ներառում են հանրակրթության բովանդակության և կառուցվածքի վերանայում, ուսումնառության արդյունքների թիրախավորում և դասավանդման մեթոդների արդիականացում՝ տեղեկատվական

[7] Comprehensive and Enhanced Partnership Agreement, available at https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ENG_1.pdf

տեխնոլոգիաների ներդրմամբ: Ուշադրության կենտրոնում են նաև կրթության չափորոշիչների մշակումը, կրթության կառավարման բարելավումը, ուսումնառության արդյունքների գնահատումը և անցումը համընդհանուր ներառականության: Թեև այս ցանկը համապարփակ է, սակայն կոնկրետ գործողությունների և արդյունքների մակարդակով առավել համապատասխան կետերը հստակորեն չեն նշվում հանրակրթության (միջնակարգ և ավագ դպրոց) վերաբերյալ: Փոխարենը, դրանք հիմնականում ուղղված են բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կամ նախադպրոցական կրթությանը: Համընդհանուր ներառական հանրակրթության անցումը և դրա կառավարումը ուրվագծված են 62-72 կետերում, որոնք վերաբերում են նախադպրոցական, միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական և բարձրագույն կրթությանը: Այնուամենայնիվ, ճանապարհային քարտեզում[8] կրթության չափորոշիչների մշակումը, կրթության կառավարման բարելավումները և ուսումնառության արդյունքների գնահատումները նշված են որպես արդյունքներ միայն բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական կամ ոչ ֆորմալ կրթության համար: Համընդհանուր ներառականությունը նշված է նախադպրոցական կրթության դեպքում, իսկ թափանցիկության պարտավորությունները վերաբերում են բացառապես բժշկական/առողջապահության ոլորտի կրթությանը և նշված չեն որպես կատարողականի թիրախներ Կրթության բաժնում: Կրթության մեջ հասանելիությունը ևս բացակայում է ճանապարհային քարտեզից, չնայած այն ճանաչվում է որպես ՀԸԳՀ պարտավորություն: Հասանելիությունն ամրապնդելու համար նախատեսված քիչ միջոցառումները, հետևաբար, դուրս են թողնում հանրակրթությունը և համակարգն ընդհանրապես, քանի որ դրանք չեն ազդում համակարգի վրա, այլ կրում են հատվածային բնույթ:

Թեև ՀԸԳՀ-ն և ճանապարհային քարտեզը լայնորեն ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ, սակայն դեռևս մնում են զգալի բացեր: Մասնավորապես, որ ՀԸԳՀ-ն և ճանապարհային քարտեզը բավարար չափով չեն անդրադառնում Հայաստանի կրթական համակարգում համակարգային բարեվարքության հարցերին և ուսումնառության աղքատությանը: Հետևաբար, այս ոլորտները բավարար չափով ներառված չեն քաղաքականության շրջանակում:

ՀԸԳՀ-ի նման համապարփակ համաձայնագրի կիրարկումը չի կարող սահմանափակվել դրա համապատասխան բաժիններում նշված պարտավորություններով և միջոցառումներով: Այլ բարեփոխումների օրակարգեր, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը, ազդում են կիրարկման վրա և պետք է հաշվի առնվեն

[8] Joint Action Plan and Roadmap https://www.moj.am/storage/uploads/CEPA-Roadmap_ENG-Draft_June-2018.pdf

պարտավորությունների կատարման առաջընթացը մշտադիտարկելիս: Հետևաբար, մտադիտարկման նկատմամբ պատասխանատու և համալիր մոտեցում ապահովելու նպատակով մենք նաև հաշվի ենք առնում նշված երկու ազգային ռազմավարությունների գործողությունների ծրագրերը՝ կրթության հիմնական քաղաքականության փաստաթղթի՝ 2023-2030թթ. **Կրթության զարգացման պետական ծրագրի (ԿԶՊԾ)** հետ միասին:[9]

Կիրարկում և քաղաքականության շրջանակ

ՀԸԳՀ պարտավորությունների կատարման հիմնական գործիքը զարգացման ազգային ռազմավարություններն են: Բարեփոխումների գործողությունների և դրանց նախատեսված ու փաստացի արդյունքների համապատասխանությունը վերլուծելու համար հարկ է ուսումնասիրել կրթության զարգացման վրա ազդող հիմնական բարեփոխումների օրակարգերը: Մշտադիտարկման ժամանակահատվածում Հայաստանում կրթության զարգացման հիմնական քաղաքականության փաստաթուղթը 2023-2030թթ. Կրթության զարգացման պետական ծրագիրն է (ԿԶՊԾ): Միևնույն ժամանակ, քանի որ Հակակոռուպցիոն ռազմավարությունը կարող է ներառել կրթության բարեվարքության վերաբերյալ համապատասխան միջոցառումներ, իսկ Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը հավասարապես կարող է ընդգրկել ներառականության և հասանելիության հարցերը, մենք ուսումնասիրում ենք բոլոր երեք հիմնական ռազմավարությունները՝ կատարողականի թիրախերը բացահայտելու և առաջընթացին հետևելու համար:

Կրթության զարգացման պետական ծրագիրը (ԿԶՊԾ) ապահովում է կրթության վիճակի ծավալուն գնահատում՝ հիմնականում հղում կատարելով նախահեղափոխական շրջանի վիճակագրությանը և պայմաններին՝ չնայած, որ այն ավարտվել է 2022թ. և ընդունվել 2023թ.: Այն հատկորոշում է առկա ոլորտային մարտահրավերները և ուրվագծում առաջիկա տարիների հիմնական ուղղություններն ու նպատակները: Այնուամենայնիվ, թեև այն ներկայացնում է համակարգի ձախողումների մանրակրկիտ ցանկ՝ ներառյալ ցածր որակը, ցածր ուսումնական առաջադիմությունը, ուսումնառության աղքատության բարձր մակարդակը, ֆունկցիոնալ անգրագիտությունը և ցածր սոցիալ-տնտեսական և խոցելի խմբերի սովորողների համար որակյալ կրթության անհավասար հասանելիությունը, այն բավարար չափով չի վերհանում այդ ձախողումների պատճառները: Մասնավորապես, այն անտեսում է նախորդ երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած համակարգային բարեվարքության տևական քայքայումը: ԿԶՊԾ-ում նշվում է համակարգի անհարկի քաղաքական միջամտության և վերահսկողության մասին, սակայն անդրադարձ չի

[9] Հասանելի է հետևյալ հղումով https://escs.am/am/news/15292

կատարվում տևական քաղաքական և ֆինանսական ազդեցության հետևանքով առաջացած խորապես արմատացած բարեվարքության ոտնահարումներին:

ԿԶՊԾ-ն և դրանից բխող գործողությունների ծրագիրը[10] ենթադրում են, որ պարզապես քաղաքական միջամտության դադարեցումը կլուծի այս խնդիրները: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ կոռուպցիոն գործելակերպը ամրապնդվել է ինստիտուցիոնալ քաղաքականությամբ և մեխանիզմներով, որոնք հնարավոր են դարձրել համակարգային չարաշահումները: Ինստիտուցիոնալ մակարդակով բարեվարքության վերականգնումը պահանջում է ավելին, քան պարզապես նախկին գործելակերպի դադարեցումը. այն պահանջում է լավ կառավարման սկզբունքների ներդրում արդյունավետ մեխանիզմների միջոցով, որոնք կանխում են վերոնշյալ չարաշահումների ամենատարածված ձևերը: Ավելին, տարիների համակարգային չարաշահումները հանգեցրել են մեծ թվով երեխաների և երիտասարդների կրթական իրավունքների լայնածավալ խախտումների: Չնայած ԿԶՊԾ-ն ընդունում է այս խախտումները, այն չի բարձրացնում տուժած սովորողների իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը որպես ռազմավարական առաջնահերթություն:

ԿԶՊԾ գործողությունների ծրագիրը չի ներառում խորը արմատացած կոռուպցիոն գործելակերպի ազդեցությունը վերացնելու միջոցառումներ. այս խնդրին առնչվող մի քանի գործողությունները վերաբերում են բարձրագույն կրթությանը: Հանրակրթության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության նախաձեռնությունները սահմանափակվում են այնպիսի փաստաթղթերի մշակմամբ, որոնք քիչ կամ ընդհանրապես կապ չունեն վերոնշյալ բարեվարքության զգալի խախտումների հետ: Հատկանշական է, որ բարձրագույն կրթության ոլորտում հաշվետվողականությունը հաճախ հակադրվում է ակադեմիական անկախությանը, ինչը վկայում է բարեվարքության և ակադեմիական ինքնավարության խորքային թյուրընկալման մասին: Այս տեսակետը հաշվետվողականությունն իջեցնում է հաստատությունների և գործընթացների նկատմամբ պարզունակ վերահսկողության մակարդակին՝ բովանդակային վերահսկողության մեխանիզմների ստեղծման փոխարեն:

Կրթության որակի բարելավումը, իրավամբ նշվելով որպես հիմնական կարիք, հանդիսանում է ԿԶՊԾ երեք չափումներից մեկը: Որակի բարելավման նպատակով միջոցառումների ծրագիրը նախատեսում է կրթության բովանդակության վերանայում, դրա արդիականացում և իրականացում: Միջոցառումների ծրագրով նաև նախատեսվում է բոլոր առարկայական ծրագրերի և ուսումնական ծրագրերի համապատասխանեցում

[10]Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.irtek.am/views/act.aspx?aid=120612

միջազգային չափորոշիչներին, վերանայված ուսումնական ծրագրերի իրականացում և վերանայված դասագրքերի հրատարակում: Այն նաև նախատեսում է ուսուցիչների մասնագիտական զարգացում և կամավոր ատեստավորում:

Կրթության որակը բարելավելու մեկ այլ միջոցառում, որը նշված է ԿԶՊԾ միջոցառումների ծրագրում, կրթական ծրագրերի թիրախային ներդրումն է: Նախատեսվում է նաև մասնագետներ ներգրավել սփյուռքից և բիզնես ոլորտից՝ առցանց հնարավորությունների և բովանդակության մշակման միջոցով կրթությունն առավել հասանելի դարձնելու նպատակով: ԿԶՊԾ-ով նաև նախատեսվում է դպրոցներում զարգացնել արտադպրոցական կրթությունը և զարգացնել դպրոցների կարողությունները թվային կրթական ռեսուրսներից օգտվելու համար:

Որակյալ **կրթության հասանելիության** հարցերը հասցեագրվում են հիմնականում ընդունելության ավելացման միջոցով: Այս առումով, գործողությունների ծրագիրը նախատեսում է դպրոցից դուրս մնացած երեխաների նույնականացում և կրթական գործընթացին վերաինտեգրում: Առավել վերաբերելի մոտեցմամբ կրթությունը համարվում է հասանելի, երբ բավարարվում է երկու պայման՝ բոլորի համար կա ուսումնական նվազագույն առաջադիմություն, և ընտանիքի սոցիալական կարգավիճակը չի խոչընդոտում սովորողին լիարժեքորեն իրացնել իր կրթական ներուժը: Թեև որպես այդպիսին նշված չէ, սակայն կան միջոցառումներ, որոնք կարող են նպաստել միասնական պարտադիր չափորոշչի սահմանմանը: Այնուամենայնիվ, երկրորդ պայմանը ԿԶՊԾ-ում որևէ տեղ շարադրված չէ: Ինչպես կարելի է տեսնել ստորև, այն նաև չի հիշատակվում Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մեջ:

Ուսումնառության աղքատությունը որպես լուրջ մարտահրավեր նշելով՝ ԿԶՊԾ գործողությունների ծրագիրը ներառում է ակադեմիական դժվարություններ ունեցող սովորողների համար երկարօրյա ծրագրի իրականացում: ԿԳՄՍ-ն հրապարակել է հրամանագիր, որն ուրվագծում է այս ծրագիրը՝ ուղղված որոշակի առարկաներում ցածր առաջադիմություն գրանցած սովորողներին: Թեև ուսումնառության աղքատության դեմ պայքարի համար անհրաժեշտ են անհապաղ և չափելի միջամտություններ, սակայն ծրագիրն իր ներկայիս տեսքով չունի հաշվետվողականության տարրական մեխանիզմներ: Չկան դրույթներ, որոնք կապահովեն, որ կարիքի մեջ գտնվող բոլոր սովորողները նույնականացվեն և ներառվեն, ինչպես նաև չկան անկախ և ստուգելի գնահատումներ՝ առաջընթացին հետևելու համար: Այս բացերը սրվում են ուսումնական առաջադիմության գնահատման հետ կապված շարունակվող խնդիրներով, որոնք քննարկվում են ստորև:

Մեր կարծիքով, հավասարության խնդրի լուծման գործում հիմնական բացթողումներից մեկն այն է, որ չկան ուսումնական աղքատության սոցիալական չափման թիրախային ուսումնասիրություններ, անգամ եթե TIMSS-ը տրամադրում է նման վերլուծություն: ՍՏԿ-ից կախված ուսումնառության աղքատության վերաբերյալ նման պատկերացումը թույլ կտար կառավարությանը և համայնքներին լուծել խնդիրն առավել թիրախային և արդյունավետ կերպով:

Ինչպես նշվեց վերևում, որակյալ կրթության հասանելիության և հաշվետվողականության հարցերը բավարար չափով չեն հասցեագրվում ԿԶՊԾ-ում՝ հաշվի առնելով դրանց մասշտաբը և լրջությունը: Ուստի, մենք հավելյալ ուսումնասիրել ենք Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը և Հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ այդ փաստաթղթերից համապատասխան միջոցառումներն ու կատարողականի թիրախները հատկորոշելու համար:[11] Սա ապահովում է մշտադիտարկման համալիր մոտեցում և գնահատման ճշգրտություն:

Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության 2023-2025թթ. գործողությունների ծրագրի 7-րդ գլուխը վերաբերում է կրթությանը: Դրա ռազմավարական նպատակն է «ապահովել կրթության իրավունքի իրացման ընթացքում խոչընդոտների վերացումը՝ մարդու իրավունքների ապահովման, կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, համընդհանուր ներառականության ապահովման, նախադպրոցական անվճար կրթության հասանելիության համատեքստում»: Ակնկալվող ազդեցությունը նկարագրվում է հետևյալ կերպ՝ բարելավվել են ուսուցիչների գիտելիքները, հմտությունները ու կարողությունները մարդու իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների վերաբերյալ: Ստացված գիտելիքները կիրառվում են դասավանդման պրոցեսում:

Այս կապակցությամբ, նպատակին հասնելու միակ միջոցը նկարագրված է 7.1 գործողության մեջ՝ երաշխավորել շարունակական վերապատրաստումը միջին և ավագ դպրոցների ուսուցիչների համար ժողովրդավարություն, օրենքի և իրավունքի գերակայության վերաբերյալ թեմաներով: Թեև ուսուցիչների գիտելիքների և հմտությունների բարելավումը համահունչ է այս գործողությանը, պարզ չէ, թե ինչպես է ժողովրդավարության և օրենքի գերակայության թեմաներով վերապատրաստումը

[11] https://www.moj.am/en/page/583; https://moj.am/storage/uploads/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%BE%D5%A1%D5%AE%203%20(1)%20(1)%20(3)%20(2).pdf;

ուղղակիորեն նպաստում դպրոցից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, անվճար նախադպրոցական կրթության հասանելիության ապահովման կամ համընդհանուր ներառականության նպատակների իրագործմանը: Փաստացի, սահմանված նպատակի և դրա արդյունքի, ինչպես նաև նպատակի և առաջարկվող գործողության միջև որևէ ակնհայտ կապ չկա:

Նախատեսվում է վերապատրաստված ուսուցիչների թիվը հասցնել 80%-ի մինչև 2025թ. և 60%-ի մինչև 2024թ. վերջը: Մենք կհետևենք այս կատարողականի թիրախին: Նպատակը պետք է իրագործվի ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, քանի որ կառավարությունը ֆինանսավորում չի հատկացրել այս գործողության համար:

Հակակոռուպցիոն ռազմավարությունը միտված է կառավարմանը՝ որպես ամբողջություն՝ չկենտրոնանալով որևէ կոնկրետ ոլորտի վրա: Ռազմավարության հիմնական շեշտը հակակոռուպցիոն մարմինների և մեխանիզմների ստեղծման և ամրապնդման վրա է: Տարբերվելով նախկին ռազմավարական մոտեցումներից՝ այն չի թիրախավորում կառավարության որևէ կոնկրետ ոլորտ կամ ճյուղ: Բարեվարքության բարձրացմանն ու հաշվետվողականության մեխանիզմների ամրապնդմանն ուղղված ընդհանուր միջոցառումների ուսումնասիրությամբ վերհանվել են Արդարադատության նախարարությանը հանձնարարված զուտ ընդհանրական գործողություններ: ԿԳՄՍ-ին որևէ պարտավորություն վերապահված չէ՝ իր սեփական կառույցներում՝ ներառյալ բարձրագույն, հանրակրթական կամ մասնագիտական կրթական հաստատությունների լայն շրջանակում բարեվարքության մեխանիզմները շտկելու կամ ինտեգրելու առնչությամբ:

Կրթությանն առնչվող միջոցառումների շարքում նկարագրվում է երկու գործողություն՝ 3.9 և 3.11 գործողությունները: Առաջինը ենթադրում է բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիր: Երկրորդը վերաբերում է դպրոցներում հակակոռուպցիոն ակումբների ստեղծմանը: Այս գործողություններից ոչ մեկը, սակայն, արդյունավետորեն չի լուծում կրթական համակարգում առկա համակարգային խախտումները:

Եզրափակելով՝ հարկ է նշել, որ ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև Հայաստանի կրթական լայնածավալ բարեփոխումները, չեն լուծում համակարգի ներսում առկա ամենահրատապ խնդիրը, այն է՝ բարեվարքության պակասը: Բացի այդ, դրանք բավարար միջոցառումներ չեն նախատեսում կրթության համակարգում հավասարության և այն երեխաների կրթության իրավունքը վերականգնելու համար, որոնց կրթության և

հմտությունների մակարդակը չի համապատասխանում ուսումնական աղքատության շեմից վերև գտնվող նվազագույնին: Ավելին, գործող քաղաքականություններում չկան բավարար դրույթներ՝ կրթական գործընթացում ցածր առաջադիմություն գրանցած սովորողներին վերաինտեգրելու համար:

Ելակետ

Սույն մշտադիտարկման ժամանակահատվածը պարամետրերի և կատարողականի թիրախների մեծ մասի համար սահմանվել է 2022-2024թթ.: Միայն այն դեպքում, երբ ՀԸԳՀ-ով ստանձնած պարտավորությունները կատարվել են այս ժամանակահատվածից առաջ, այն կերկարաձգվի մինչև 2022թ. կոնկրետ արդյունքի համար: Բացի այդ, մի քանի տվյալների հավաքածուների դեպքում, որոնք համավարակի պատճառով առկա չեն 2022-2023թթ. ժամանակահատվածի համար, ինչպիսիք են TIMSS արդյունքները, կօգտագործվեն նախապատմության ամենավերջին վավեր տվյալները, որոնք TIMSS-ի պարագայում վերցված են 2019թ. թեստից: Սա վերաբերում է նաև կառավարման և կրթության որակի պարամետրերին, քանի որ դրանց առաջնահերթություն է տրվել ԿԶՊԾ-ից առաջ հետհեղափոխական կառավարության կողմից:

Վերը նշված հիմնախնդիրների յուրաքանչյուր կատեգորիայի, ինչպես նաև ՀԸԳՀ-ով ստանձնած երեք պարտավորությունների՝ բոլոր աստիճաններում որակի, հասանելիության և թափանցիկության գնահատման համար կօգտագործվեն առկա տվյալները, ներկայիս քաղաքականությունը և Համաշխարհային բանկի (ՀԲ), ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացված միջազգային գնահատումների վերլուծությունը, ինչպես նաև միջազգային թեստերը, ինչպիսին է TIMSS 2023-ը:[12] Բացի այդ, կգնահատվեն ուսուցիչների կամավոր ատեստավորման գործող գնահատումները, Երևանի, մարզային քաղաքների և գյուղական վայրերի պատահականորեն ընտրված դպրոցների ներքին գնահատումները, ինչպես նաև տեսչական մարմինների զեկույցները: Կներառվեն մանկավարժների, ծնողական խմբերի, փորձագետների և կառավարության ներկայացուցիչների հետ հարցազրույցներից ստացված կարծիքները: Ի վերջո, կիրականացվի 2023թ. իրավիճակի գնահատում: Ստորև ներկայացվում է ՀԸԳՀ-ում նշված երեք չափումների՝ *բարեվարքություն*, *կրթության որակի բարելավման* և *որակյալ կրթության հասանելիության, հավասարությունը կրթական համակարգում* ելակետային ուսումնասիրությունը:

Բարեվարքությունը կրթական համակարգում

[12] https://timss2023.org/results/

Ուսումնասիրության խնդրո առարկան կբաժանվի՝ ըստ հիմնական խախտումների, այն է՝ ուսուցիչների և տնօրենների նշանակում և ազատում, թեստավորման և գնահատման հուսալիություն և հաշվետվողականություն, ինչպես նաև կրկնուսուցում՝ որպես համակարգի ընդհանուր բարեվարքության ցուցիչներ:

Թեստավորման համակարգի ելակետային գնահատման համար զեկույցը հղում է կատարում ՅՈՒՆԻՍԵՖ-ի *«Հայաստանում դասավանդման զանգվածային գնահատման ազգային համակարգի վերլուծություն»*[13] ուսումնասիրությանը, որն իրականացվել է Կրթության համաշխարհային գործընկերության աջակցությամբ՝ կառավարության խնդրանքով: Ուսումնասիրության եզրակացությունն այն է, որ Հայաստանի գնահատման համակարգը հուսալի չէ՝ ի համեմատ միջազգային թեստերի, մասնավորապես՝ TIMSS-ի: Այն նաև ներկայացնում է համակարգային խնդիրները, ինչպես նաև տրամադրում բարելավման առաջարկություններ: Զեկույցի շրջանակներում կվերանայվի այդ առաջարկությունների իրականացումը և անկախ կերպով կհավաքագրվեն տվյալներ հարցազրույցներից, դպրոցների ներքին գնահատումներից և պետական պաշտոնյաներից:

Նշանակման և ազատման գործելակերպի վերաբերյալ տվյալները, ինչն արձանագրվել է որպես խախտում, արտացոլված են Կրթության տեսչական մարմնի զեկույցներում, իսկ սույն զեկույցում դրանք համեմատվում են մշտադիտարկման տարիների տվյալների հետ:

Մասնավոր դասավանդումը, այդ թվում՝ դասարանի ուսուցիչների կողմից կրկնուսուցումը, չի առանձնացվել որպես խախտում կամ իրավախախտում: Այն ո՛չ արգելված է, ո՛չ էլ կարգավորվում է օրենքով: Նախկինում դասարանի ուսուցիչների կողմից մասնավոր կրկնուսուցումը համարվում էր ոչ էթիկական վարքագիծ, սակայն այն չի ներառվել նոր բարեվարքության կանոններում: Արդյունքում, դրա դեմ որևէ միջոց չի ձեռնարկվել, և վիճակագրական տվյալներ չեն հավաքագրվում: Հետևաբար, ողջամիտ է ենթադրել, որ այս գործելակերպը շարունակվում է այն մակարդակով, ինչ կար նախորդ հետազոտություններում, ներառյալ ԿԶՊԾ-ում ներայացված գնահատման ծավալով: Սահմանված կատարողականի թիրախի բացակայության պարագայում փորձագետը կհավաքագրի տեղեկատվություն և փորձագիտական կարծիք այս թեմայի շուրջ և այն կհամեմատի վերջին հասանելի հետազոտությունների տվյալների հետ:[14]

Կրթության որակը (դասավանդում և ուսումնառություն)

[13] https://www.unicef.org/armenia/media/15151/file/Analysis%20of%20National%20Large-Scale%20Learning%20Assessment%20System%20in%20Armenia%20.pdf
[14] Milovanovic M. et al. Strengthening Integrity and Fighting corruption in Education 2016

Մակրո մակարդակում կրթության որակի և հասանելիության հիմնական ցուցանիշներից մեկը Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմված ուսումնառության աղքատության (ՈՒԱ) ընդհանուր ցուցանիշն է: Նվազագույն հմտությունների մակարդակի վերաբերյալ տվյալների հետ մեկտեղ, այս ցուցանիշը տեղեկատվություն է տրամադրում դպրոցական կրթության զրկման (ԴԿԶ) և ուսումոռությունից զրկման (ՈՒԶ) վերաբերյալ՝ ըստ սեռի: 2022թ. այս տվյալները հետևյալն էին.

- ՈՒԱ՝ ընդհանուր առմամբ 27%, տղաների դեպքում՝ 29% և աղջիկների դեպոքւմ՝ 25%:
- ՈՒԶ՝ ընդհանուր առմամբ 20%, տղաների դեպքում՝ 22.1% և աղջիկների դեպքում՝ 17%:
- ԴԿԶ՝ ընդհանուր առմամբ 9%, տղաների դեպքում՝ 9.0% և աղջիկների դեպքում՝ 9.3%:

Հատկանշական է, որ աղջիկների պարագայում դպրոցական կրթությունից զրկման ցուցանիշները մի փոքր ավելի բարձր են, ինչը ցույց է տալիս, որ դպրոցական կրթությունից ավելի շատ աղջիկներ են մնում, քան տղաներ, մինչդեռ ուսումնառությունից զրկման ցուցանիշներն աղջիկների օգտին են:
Մեկ այլ ընդունված ցուցանիշ են միջազգային թեստերի արդյունքները: Մինչ օրս Հայաստանը մասնակցել է միայն TIMSS-ին: Ընտրված ելակետից առաջ TIMSS-ի վերջին արդյունքները ստացվել են 2019թ. թեստից, որն այս զեկույցի համար համարվում է հենակետ: Թեև արդյունքները ցույց են տալիս որոշակի բարելավում 2015թ. համեմատ, սակայն դրանք մնում են ցածր. 4-րդ դասարանի սովորողների ընդհանուր միավորը մաթեմատիկայից կազմել է 498, որը մի փոքր ցածր է TIMSS-ի 500 սահմանած միավորից: Այս միավորի բովանդակային բաղադրիչն ավելի բարձր էր, քան ճանաչողական բաղադրիչը: Արդյունքները նաև ցույց են տալիս, որ՝

- Սովորողների 92%-ն արձանագրել է մաթեմատիկայի ամենացածր գիտելիքի մակարդակ, 64%-ը՝ միջին մակարդակ, 23%-ը՝ բարձր մակարդակ, և միայն 3%-ը՝ խորացված մակարդակ:
- Հայաստանյան սովորողները բոլոր ոլորտներում արձանագրել են միջազգային միջինից ցածր արդյունքներ, ընդ որում՝ աղջիկները գերազանցել են տղաներին:
- Սովորողների 8%-ը չի կարողացել հասնել նույնիսկ ամենացածր շեմին:

Բնագիտության մեջ՝

- Ընդհանուր միավորը կազմել է 466, որը ցածր է 500 միավորի նշաձողից:

- Սովորողների 2%-ը արձանագրել է խորացված մակարդակ, 14%-ը՝ բարձր մակարդակ, 47%-ը՝ միջին մակարդակ, իսկ 80%-ը՝ ամենացածր մակարդակ:
- Հայաստանյան սովորողների 20%-ը չի հասել նույնիսկ ամենացածր շեմին, ինչը նշանակում է, որ նրանք չունեն գիտական տարրական փաստերի մասին գիտելիք:
- Բովանդակային բաղադրիչի միավորը ավելի բարձր էր, քան ճանաչողական բաղադրիչի միավորը՝ համապատասխանաբար 476 և 463:.

Ուսումնառության աղքատության, միջազգային թեստերի արդյունքների և դպրոցների ինքնագնահատման զեկույցների հետ մեկտեղ, զեկույցը կհետևի ուսուցիչների վերապատրաստման առաջընթացին, կամավոր ատեստավորման արդյունքներին և նոր կրթական չափորոշիչների ազդեցությանը՝ հիմնվելով ուսուցիչների և կրթության փորձագետների հետ հարցազրույցների վրա:

Որակյալ կրթության հասանելիություն

ԿԶՊԾ ակնարկը նկարագրում է կրթական համակարգի հասանելիությունը մշտադիտարկման ժամանակահատվածի սկզբում: Այս ոլորտում առաջընթացի հիմնական որակական ցուցանիշներն են՝

- Դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների տոկոսը:
- Դպրոցական կրթություն ստացող երեխաների տոկոսը, որոնք չեն սովորում՝ ըստ TIMSS արդյունքների:
- Համաշխարհային բանկի/ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ուսումնական աղքատության ներքո դասակարգված սովորողների տոկոսը:

Մշտադիտարկման ժամանակահատվածի սկզբում ավագ դպրոցի և նախադպրոցական հաստատությունների հասանելիությունը անհավասար է. ավագ դպրոցների մեծ մասը գտնվում է Երևանում և այլ խոշոր քաղաքներում, ինչը գյուղաբնակ սովորողներին ստիպում է կա՛մ երթևեկել դպրոց, կամ հաճախել պակաս կարողություններով 12-ամյա հանրակրթական դպրոցներ: Մինչդեռ Երևանի նախադպրոցական հաստատություններն անվճար են, մայրաքաղաքից դուրս գտնվող հաստատությունները պահանջում են վճար և նախադպրոցական տարիքի մեկ երեխայի հաշվով շատ ավելի քիչ են: Նախորդ կառավարության էլիտիստական կրթական հայեցակարգի հետևանքով կան ընտրյալներ, որոնք լավ վերազինված եմ:

Ֆինանսավորման և մարդկային կապիտալի նշաձողերի վերաբերյալ՝ օգտագործելով ՅՈՒՆԻՍԵՖԻ-ի 2020թ. տվյալները, ունենք հետևյալ պատկերը. [15]

- Դպրոցական տարիքի երեխաների 10%-ը չէր ընդունվել տարրական կամ միջնակարգ դպրոց:
- 6 տարեկանների 15.9%-ը, 9 տարեկանների 9.9%-ը և 14 տարեկանների 13.2%-ը չէր ներառվել հանրակրթության համակարգում:
- Հայաստանն ուներ ամենացածր համախառն ընդունելության հարաբերակցությունը համեմատելի և նշաձողային երկրների շարքում:
- Դպրոցական տարիքի 44,500 երեխա չէր ընդունվել պարտադիր կրթական հաստատություն կամ չէր հաճախում դասերի:
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույցը ցույց է տվել, որ աղքատ ընտանիքների երեխաների 4.0%-ը և ծայրահեղ աղքատ ընտանիքների երեխաների 20.7%-ը դպրոց չէր հաճախում աշխատելու անհրաժեշտության կամ կրթության բարձր ծախսերի պատճառով:

Կրթության վրա պետական ծախսերը նվազել են.

- Կրթության մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 2010թ. 3.3%-ից մինչև 2.8% 2020թ., ինչը Հայաստանի ցուցանիշը դարձնում է համեմատելի երկրների շարքում ամենավատը:
- Ի համեմատություն, Վրաստանում կրթության վրա ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմել է 3.8%, Մոլդովայում՝ 6.1%, իսկ Բալթյան երկրներում՝ 4.5%:
- Հայաստանի մարդկային կապիտալի համաթիվը (ՄԿՀ) 2020թ. կազմել է 0.58:
- Նախակրթության վրա ծախսերը կազմել են 1,157 դոլար, ինչը 86%-ով ցածր է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշից և 49%-ով ցածր է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներից:[16]

Աղքատության շեմից ցածր ապրող սովորողները միջնակարգ դպրոցում արդեն իսկ ավելի վատ ակադեմիական առաջադիմություն ունեին, ինչը ավելի մեծ հետևանքներ է ունենում նրանց կրթական և տնտեսական հնարավորությունների վրա մեծահասակ տարիքում՝ կրճատելով նրանց սոցիալական շարժունակությունը: 2019թ. TIMSS արդյունքների հիման վրա իրականացված կրթական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանի համակարգը համեմատաբար

[15] Available at https://www.unicef.org/armenia/en/reports/education-sector-analysis-armenia
[16] See Learning Poverty Briefs of the WB, e.g. https://www.worldbank.org/en/topic/education/brief/country-learning-poverty-briefs

անարդյունավետ էր տարբեր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող սովորողներին սպասարկելու համար՝ ի համեմատ տարածաշրջանի այլ երկրների: Այսպիսով, նմանատիպ ՍՏԿ ունեցող, բայց Ռուսաստանի Դաշնությունում, Թուրքիայում կամ Ղազախստանում բնակվող սովորողներն ավելի լավ առաջադիմություն ունեն մաթեմատիկայից և գիտությունից:

Արդյունքներ

Որակ

Բովանդակության վերանայում և արդիականացում, կիրարկում. ԿԶՊԾ որակի բարելավման ուղղության առաջին բաղադրիչի համար, որի միջոցով 1-12 դասարանների ուսումնական ծրագրերը և առարկայական ծրագրերը պետք է վերանայվեն և արդիականացվեն, և ամբողջությամբ պետք է կիրարկվեն նոր կրթական չափորոշիչները, սահմանված է 2026թ.՝ որպես թիրախային տարի: Այս գործողության համար հստակ ժամանակացույց չկա, հետևաբար, այս բաղադրիչի մեր գնահատումը ներկայացնում է ներկա իրավիճակը և գնահատում է դինամիկան՝ 2026թ. նպատակին հասնելու հնարավորությունը վերհանելու համար:

Այս բաղադրիչի հիմնական կատարողականի ցուցանիշներից մեկը, ԿԶՊԾ գործողությունների ծրագրի, ուսուցիչների կամավոր ատեստավորումն է: Գործողությունների ծրագրում սահմանվում են 18% և 25% նպատակներ համապատասխանաբար 2023 և 2024թթ. համար:

Այս ցուցանիշի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս հետևյալը. [17]

- 2022 և 2023թթ. կամավոր ատեստավորում է անցկացվել 5-12 դասարանների (2022) և 1-12 դասարանների (2023) ուսուցիչների համար:
- 2022թ. ատեստավորման գործընթացին մասնակցել է բոլոր ուսուցիչների 8%-ը, որոնցից 33%-ը չի կարողացել հաղթահարել 59% շեմը:
- Այս ուսուցիչները շարունակում են դասավանդել, սակայն պետք է վերահանձնեն ատեստավորումը մեկ տարվա ընթացքում:
- 2023թ. ատեստավորման գործընթացին մասնակցել է բոլոր ուսուցիչների 14.7%-ը, որոնցից 31.7%-ը չի կարողացել հաղթահարել շեմը: Երկու տարիների միջին միավորը կազմել է 48.1%, ինչը ցածր է պահանջվող 59%-ից:

[17] ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ 2023 Թ.2023, 2024, հասանելի է ԿԶՆԱԿ-ի կայքում

Այսպիսով, ԿԶՊԾ գործողությունների ծրագրով կամավոր ատեստավորման պարտավորությունը չի կատարվել (14.7%՝ 18% նպատակի համեմատ): Առավել մտահոգիչ է այն, որ կամավոր թեստ հանձնած ուսուցիչների գրեթե մեկ երրորդը չի կարողացել հաղթահարել մասնագիտական շեմը: Հավանական չէ, որ նրանք, ովքեր որոշել են չհանձնել թեստը՝ չնայած հանձնելու պարագայում աշխատավարձի բարձրացման խթանին, ավելի լավ արդյունքներ կարձանագրեին: Մասնագիտական կարողությունների նման ցածր մակարդակը էական խոչընդոտում է բարձրորակ դասավանդմանն ու ուսումնառությանը:

Ուսուցման որակի մեկ այլ ցուցանիշ է վերին քվանտիլի ուսուցիչների տոկոսը, որը 2022թ. կազմել է 6.3%, իս 2023թ.՝ 5.7%, երկուսն էլ զգալիորեն նվազել են 2021 թվականի 17%-ից: Հաշվի առնելով, որ թեստերը հիմնված էին դպրոցական ուսումնական ծրագրերի և դասագրքերի բովանդակության վրա, այս արդյունքները վկայում են դասավանդման որակի անկման մասին: Սա լուրջ մարտահրավեր է կարճաժամկետ հեռանկարում դասավանդման որակի բարելավման համար, մասնավորապես՝ հաշվի առնելով մշտադիտարկման ժամանակահատվածում մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցող ուսուցիչների ցածր թիվը, մասնավորապես՝ 2023 և 2024թթ. համապատասխանաբար 30 և 50: Համապատասխանաբար, նոր մանկավարժական մեխանիզմի (չի նշվում) շրջանակներում որակավորված ուսուցիչների թիվը 2023թ. կազմում է 24, իսկ 2024թ.՝ 26:

TIMSS-ի արդյունքներ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանում կրթական մակարդակի ամենաարժանահավատ գնահատումը մնում է միջազգային թեստավորումը, մասնավորապես՝ TIMSS-ը: 2023թ. TIMSS-ին մասնակցել են միայն 4-րդ դասարանի սովորողները: Ընդհանուր միավորը կազմել է 513, որը գերազանցում է TIMSS-ի 500 միավորի նշաձողը և արձանագրում է նախորդ թեստի համեմատ 17 միավորի (3%) բարելավում: Միջազգային գնահատման մեջ սովորողների բաշխումը հետևյալն էր. ցածր՝ **93**%, միջին՝ **72**%, բարձր՝ **31**%, խորացված՝ **4**%:

Սովորողների տոկոսը, որոնք չեն հաղթահարել նվազագույն շեմը, նվազել է 1%-ով՝ 2019 թվականի համեմատ, որտեղ 7%-ը չի ցուցադրել տարրական մաթեմատիկական գիտելիքներ:

Բնագիտական առարկաների արդյունքները նվազել են 2019թ. համեմատ: 2023թ. ընդհանուր միավորը կազմել է 457, 466-ից ցածր, ինչը 500-ի նշաձողից ցածր է: Գնահատման բաշխումը հետևյալն է՝ խորացված՝ **0**%, բարձր՝ **14**%, միջին՝ **47**%, ցածր՝ **80**%:

Սա նշանակում է, որ հայաստանյան սովորողների 20%-ը չի կարողացել հասնել նույնիսկ գիտության նվազագույն շեմին, ինչը վկայում է ուսումնառության լուրջ բացի մասին:

Ուսումնառության նույն լճացման մասին խոսվում է ԳԹԿ զեկույցներում, որոնք ցույց են տալիս, որ ավարտական և միասնական քննությունների միավորները վերջին 6 տարիների ընթացքում որևէ նկատելի բարելավում չեն արձանագրել՝ հայոց լեզվից միջինը 13.0 և մաթեմատիկայից 12.4 միավոր:[18] Այսպիսով, ՀԸԳՀ-ի կիրարկումից ավելի քան 4 տարիները և լայնածավալ բարեփոխումները դասավանդման որակի նկատելի բարելավման չեն հանգեցրել՝ ներառյալ թե՛ դասավանդումը, թե՛ ուսումնական առաջադիմությունը:

Ուսումնառության աղքատության ցուցանիշները 2024թ. համար մնում են նույնը՝ 27%, որը 12 տոկոսային կետով բարձր է (վատ), քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշը: Հայաստանում սովորողների 20%-ը տարրական դպրոցի ավարտին չի հասնում նվազագույն հմտությունների մակարդակին (MPL), որը հաշվարկվել է 2019 թվականի 4-րդ դասարանի տվյալներով: Սա 7 տոկոսային կետով բարձր է (վատ), քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշը:[19]

Դրական զարգացում է Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) կողմից ձեռնարկված աշխատանքը, որը մշակել է մեթոդական նյութեր, անցկացրել է վերապատրաստումներ Տավուշում նոր կրթական չափորոշիչների փորձարկման ընթացքում և փորձարկել է կառավարման սկզբունքները դպրոցների կառավարման մարմինների համար: Եթե ընդլայնվեն, այս նախաձեռնությունները կարող են երկարաժամկետ օգուտներ բերել: Այնուամենայնիվ, ԿԶՆԱԿ-ը նկատում է ուսուցիչների և տնօրենների կողմից իր ռեսուրսների ոչ հետևողական օգտագործումը:

Փորձարկվել է նոր STEM ուսումնական ծրագիրը, որը հիմնված է կարողունակությունների վրա, և Տավուշում դրա երկամյա իրականացման արդյունքները վկայում են դրական և զգալի ազդեցության մասին մաթեմատիկայի և գիտության ոլորտներում սովորողների առաջադիմության վրա, որը համարժեք է իրականացման երկու տարվա ընթացքում լրացուցիչ վեց ամսվա ուսումնառության: Այնուամենայնիվ, գնահատումը նաև ցույց է տվել, որ իրականացման երկրորդ տարում, որը կատարվել է զգալիորեն ավելի քիչ ռեսուրսներով, Համաշխարհային բանկի գնահատմամբ արձանագրել է նոր ուսումնական ծրագրի ազդեցության 30 տոկոս նվազում ուսումնական արդյունքների վրա:[20] Սա ենթադրում է, որ ուսումնական ծրագրի բարեփոխումներից ուսումնառության

[18] ԳԹԿ զեկույցներ 2019-24թթ. ավարտական քննությունների և թեստավորումների վերաբերյալ
[19] https://documents1.worldbank.org/curated/en/099090524095039258/pdf/P1792091588a4f0a31b1db1c9158512792f.pdf
[20] ՀԲ ուսումնասիրությունը փոստով

առավելագույն օգուտներ ստանալու համար կառավարությունը պետք է ապահովի բավարար միջոցներ հաջորդ չորս-հինգ տարիների ընթացքում դրա համարժեք իրականացման համար:

Որակյալ կրթության հասանելիություն և հավասարություն

Կառավարությունը շարունակում է հիմնականում դիտարկել հասանելիությունը և հավասարությունը որպես ընդունելության խնդիրներ: Առավել վերաբերելի մոտեցմամբ կրթությունը համարվում է հավասար, երբ բավարարվում է երկու պայման՝ բոլորի համար կա ուսումնական առաջադիմության նվազագույն մակարդակ, և ընտանիքի սոցիալական կարգավիճակը չի խանգարում սովորողին լիարժեքորեն իրացնել իր կրթական ներուժը: 3 դասարանների համար փորձարկված նոր կրթական չափորոշիչները նախատեսում են նման նվազագույն մակարդակ, ուստի չափորոշիչների լիարժեք ներդրումից հետո առաջին պայմանը կարող է բավարարվել, եթե միաժամանակ առկա լինի հավաստի և հաշվետու գնահատման համակարգ և մեխանիզմ, որը կապահովի կրթության նվազագույն ուսումնական առաջադիմության հասնելը (ինչպես տեսնում ենք ուսումնառության աղքատության ներկայիս բարձր մակարդակից, նման մեխանիզմներ դեռևս չեն ներդրվել): Երկրորդ պայմանը որևէ կերպ ձևակերպված չէ ԿԶՊԾ-ում կամ դրա գործողությունների ծրագրում: Այն փաստը, որ ուսումնառության աղքատության սոցիալական չափման թիրախային ուսումնասիրություններ առկա չեն, պետք է համարվի մեծ բացթողում: Հարկ է նկատել, որ TIMSS-ը թույլ է տալիս նման վերլուծություն: ՍՏԿ-ով պայմանավորված ուսումնառության աղքատության վերաբերյալ նման պատկերացումը թույլ կտար կառավարությանը և համայնքներին առավել հարմարեցված և արդյունավետ կերպով հասցեագրել խնդիրը և աշխատել կրթական համակարգի համակարգային հավասարության ուղղությամբ:

Ընդունելությունը մեծացնելու համար նախատեսվում են դպրոցից դուրս մնացած երեխաների նույնականացման կոնկրետ միջոցառումներ, և նախատեսվում է համապատասխանաբար 2023 և 2024թթ. նույնականացնել նրանց 50%-ին և 70%-ին: Այնուամենայնիվ, տվյալների հավաքագրման մեխանիզմի փոփոխությունների պատճառով անհնար էր հավաքագրել 2023-2024թթ. տվյալները: Այս երեխաների հաշվարկման մեխանիզմը և գործընթացը փոխվել են, և տվյալները ստացվում են զգալի ուշացումով: Սա ինքնին խնդրահարույց է, քանի որ հաշվարկման ուշացումը նշանակում է նրանց ֆորմալ կրթական համակարգում ներառելու համար համապատասխան միջոցառումների ձեռնարկման ավելի երկար ուշացում: Առավելապես, որքան երկար այս երեխաները դպրոցից դուրս մնան, այնքան ավելի դժվար կլինի նրանց վերաինտեգրելը: Չնայած դպրոցից դուրս մնացած երեխաների նույնականացման և վերաինտեգրման նոր

մեխանիզի դրական արդյունքները դեռևս տեսանելի չեն, դրա մշակման հետ կապված կան որոշ մտահոգություններ. գործընթացը, կարծես, առավել միտված է ընդունելության վիճակագրության բարելավմանը, այլ ոչ թե սովորողների վերաինտեգրման արագացմանը: Միասնական սոցիալական ծառայության ներգրավումը, կարծես, որևէ արժեք չի ավելացնում՝ հաշվի առնելով սոցիալական ծառայությունների արդեն իսկ գոյություն ունեցող միասնական մեխանիզմը: Դպրոցից դուրս մնացած երեխաների իրավունքների հարցը ո՛չ որակապես, ո՛չ էլ քանակապես չի արտացոլվում երեխայի իրավունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում:[21]

Երկարօրյա ծրագրերի միջոցով ցածր առաջադիմությամբ սովորողներին վերաինտեգրելու նախաձեռնությունը մեկնարկել է 2023թ.: Գործողությունների ծրագրի կատարողականի թիրախն է, որ դպրոցների 7.5%-ը 2023թ. առաջարկի երկարօրյա ծրագրեր, իսկ 2024թ. այդ թիվը հասնի 30%-ի: Ակնկալվում է, որ սովորողների մասնակցությունը 2023թ. կհասնի 30%-ի, իսկ 2024թ.՝ 40%-ի՝ համապատասխանաբար 10,757 և 8,515: Այնուամենայնիվ, ծրագրի մասշտաբները և դանդաղ իրականացումը չեն կարող բավարարել վերաինտեգրման անհրաժեշտությունը. մասնակցող սովորողների թիվը առաջին և երկրորդ տարիներին համապատասխանաբար կազմել է 10,757 և 8,515, ինչը շատ ավելի քիչ է, քան թիրախային 30 և 40 տոկոսը, նույնիսկ եթե որպես ելակետ ընդունենք ուսումնառության աղքատության ցուցանիշը:

Ծրագրի որակական ուսումնասիրությունը վերհանել է մի շարք մտահոգություններ. ցածր առաջադիմությամբ սովորողներին ընտրելու չափանիշներն ունեն թափանցիկության և հաշվետվողականության պակաս, սովորողների առաջադիմությանը հետևելու մեխանիզմը հստակ սահմանված չէ, ծրագրի ավարտից հետո սովորողների արդյունքների առնչությամբ հաջորդիվ գործողություններ չեն ձեռնարկվում, գնահատման մեխանիզմները հետևողական չեն և պարունակում են շահերի բախման վտանգ, քանի որ դրանք չեն ներառում որևէ հուսալի թեստավորման մեխանիզմ ծրագրի ավարտից հետո:

Հաշվի առնելով փոքր գյուղական դպրոցներում որակն ապահովելու ավելի թույլ կարողությունները՝ Գործողությունների ծրագիրը նախատեսում է STEM ուսուցիչների ֆինանսական խրախուսում 100-ից պակաս սովորող ունեցող դպրոցներում: Այս դրույթն իրականացվում է:

Կրթության հավասարության գենդերային չափումը չի արտացոլվում որևէ սահմանված գործողության կամ արդյունքի մեջ: Միևնույն ժամանակ, տարբեր կազմակերպությունների

[21] Մարդու իրավունքների պաշտպանի զեկույց, հասանելի է հետևյալ հղումով՝ www.ombuds.am

կողմից իրականացված ուսումնասիրությունների տվյալներից, այդ թվում՝ Համաշխարհային բանկի՝ գենդերային հարցերի վերջին հետազոտությունից, վիճակագրությունն անհավասար է մի քանի առումներով:[22] Այսպիսով, կանայք գերազանցում են տղամարդկանց հանրակրթությունից բարձրագույն կրթության անցնելիս: 2022թ. բակալավրիատի ծրագրում կանանց ընդունելությունը կազմել է 61,5%, իսկ տղամարդկանցը՝ 44%: Այնուամենայնիվ, Վիճակագրական կոմիտեի նույն տարվա տվյալների համաձայն, տեխնոլոգիաների և գիտության գիտակարգերում սովորողների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են: Տարբեր գիտակարգերում խզվածքը տատանվում է 62%-ից մինչև 91%: Նման անհամաչափության համար կարող են լինել տարբեր պատճառներ, սակայն ակնհայտ է, որ հանրակրթության մակարդակում պետք է ձեռնարկվեն ուժեղ և անհապաղ միջոցառումներ՝ աղջիկներին խրախուսելու կենսագործել իրենց ողջ ներուժը՝ մասնավորապես հաշվի առնելով, որ աղջիկները հենց այս մակարդակում գերազանցում են տղաներին իրենց ուսումնական առաջադիմությամբ:

Գործողությունների ծրագիրը նաև նպատակ ունի բարձրացնել մատչելիությունը՝ ներգրավելով սփյուռքի և բիզնես ոլորտի մասնագետներին՝ առցանց կարողությունների զարգացմանը և բովանդակության մշակմանը նպաստելու համար: Ծրագրով նախատեսվում է 2023թ. մշակել 12 առցանց դասընթաց, իսկ 2024թ.՝ 15, որոնցից կօգտվեն դպրոցների համապատասխանաբար 30%-ը և 40%-ը: Այդուահանդերձ, երկրորդ տարում ընդամենը երեք լրացուցիչ դասընթացի ավելացումն անբավարար է թվում: Էլեկտրոնային դասընթացների մշակման լավագույն փորձը ցույց է տալիս, որ հոսթինգային հարթակի ստեղծումից հետո նոր առարկաների ավելացումը կարող է շատ ավելի արագ իրականացվել:

Բացի այդ, այն դպրոցների թիվը, որոնք կարող են զարգացնել առցանց ռեսուրսներն օգտագործելու կարողությունները, սահմանափակվում է ընդհանուրի ընդամենը 30-40%-ով: Համաշխարհային բանկի նախորդ վարկային ծրագրերը, ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ-ի և այլ դոնորների դրամաշնորհները, սակայն, ըստ տեղեկությունների, գրեթե բոլոր դպրոցներին հնարավորություն են տվել օգտվել նման ռեսուրսներից: Հետևաբար, պետք է դիտարկել ավելի հավակնոտ նպատակ:

Որակյալ կրթության հասանելիության հետ կապված Գործողությունների ծրագրի մեկ այլ կարևոր բաղադրիչ է արտադպրոցական կրթությունը: Ծրագրով առաջարկվում է ընդլայնել դպրոցներում արտադպրոցական կրթությունը, 2023թ. հասնելով դպրոցների 40%-ին, իսկ

[22] https://documents1.worldbank.org/curated/en/099100824162527996/pdf/P179877-90d0c0e9-71f5-456a-a683-a1a576083a16.pdf

2024թ.՝ 50%-ին: Բացի այդ, նախատեսվում է նաև արտադպրոցական դասընթացների ուսուցիչների ատեստավորման գործընթաց, որը 2023թ. թիրախավորում է ուսուցիչների 20%-ին, իսկ 2024թ.՝ 40%-ին: Այս դասընթացների նպատակն է սովորողներին տրամադրել խորը գիտելիքներ և հմտություններ իրենց հետաքրքրող առարկաների վերաբերյալ՝ միաժամանակ թույլ տալով նրանց լրացուցիչ կրեդիտներ վաստակել ավագ դպրոցում:

Սակայն, Գործողությունների ծրագրում նշվում է, որ այս գործողությունների համար լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ինչը ենթադրում է, որ այս դասընթացները կարող են լինել վճարովի: Այս մոտեցումը երկու էական մտահոգություն է առաջացնում: Նախ, այն տնտեսական խոչընդոտ է ստեղծում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների սովորողների համար՝ սահմանափակելով նրանց լրացուցիչ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու հնարավորությունը: Երկրորդ, այն անարդար առավելություն է տալիս բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու հարցում՝ առաջարկելով լրացուցիչ կրեդիտներ՝ փաստացի ինստիտուցիոնալացնելով դասապատրաստումը դպրոցներում. մոտեցում, որը պետք է չխրախուսվի:

Համաշխարհային բանկի կողմից իրականացված ՀՀ երկրորդ ուսումնասիրության զեկույցում[23] ընդգծվում է կրթության անհավասարությունը և դրա սոցիալական ծագումը: Մասնավորապես, ասվում է. «Կրթության հասանելիությունը Հայաստանում անհավասար է, մասնավորապես՝ նախադպրոցական, ավագ դպրոցի և բարձրագույն կրթության աստիճաններում: Աղքատ բնակչության շրջանում միայն 43.4 տոկոսն է ստանում նախադպրոցական կրթություն, և միայն 17.2 տոկոսն ունի բարձրագույն կրթության հասանելիություն: Սա հանգեցրել է սովորողների տարբեր խմբերի միջև ակադեմիական առաջադիմության զգալի անհամաչափության՝ ամենահարուստ և ամենաանապահով քվինտիլների միջև զգալի տարբերություններով: Դպրոցների գտնվելու վայրը մեկ այլ գործոն է, որը կապված է հասանելիության անհավասարության հետ: Գյուղական վայրերում երեխաների միայն 42 տոկոսն ունի նախադպրոցական կրթության հասանելիություն, և միայն 26.7 տոկոսը՝ բարձրագույն կրթության հասանելիություն: Սա ընդգծում է աղքատության և գյուղ-քաղաք բաժանման հետևանքով առաջացած կրթական անհավասարությունը լուծելու համար թիրախային միջամտությունների անհրաժեշտությունը: Ինչ վերաբերում է սեռին, աղջիկ սովորողների ընդունելության ցուցանիշներն ավելի բարձր են նախադպրոցական, միջնակարգ և բարձրագույն կրթության աստիճաններում»:

23 https://www.worldbank.org/en/news/factsheet/2024/05/14/the-world-bank-s-second-systematic-country-diagnostic-showcases-areas-for-unlocking-armenia-s-sustainable-development-po

Բարեվարքությունը կրթական համակարգում

Գործողությունների ծրագրում համակարգային բարեվարքությանն անդրադարձող որևէ կոնկրետ գործողություն նախատեսված չէր: Կրթությանն ուղղված որևէ նախաձեռնություն առկա չէր նաև հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: Մշտադիտարկումը ներառել է դպրոցների ներքին գնահատումների, կառավարության վերահսկողության զեկույցների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույցների երկրորդային տվյալների ուսումնասիրություն, ինչպես նաև հարցազրույցներ կրթության ոլորտի պաշտոնատար անձանց, մասնագետների և վերահսկող մարմինների հետ: Մշտադիտարկումը մասնավորապես անդրադարձել է վերը նշված բարեվարքության խախտումների ցուցանիշներին, մասնավորապես՝ կրթության ոլորտի անձնակազմի նշանակումներին, ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրմաը և դասարանի ուսուցիչների կողմից դասապատրաստմանը:

Ուսուցչական կազմի և տնօրենների նշանակումն ու հավաքագրումը իրականացվում է շարունակվող դժվարություններով և հակասություններով: Ավելի քան 300 դպրոց ներկայումս մշտական տնօրեն չունի: Կառավարությունը նախատեսում է տնօրեններ գործուղել այս դպրոցներ, երբ նրանք անցնեն «Այբ» հիմնադրամին պատվիրված վերապատրաստման դասընթացը: Նման գործուղումը հակասում է դպրոցի տնօրենների հավաքագրման սկզբունքներին: Ստեղծվում են նոր դպրոցական խորհուրդներ, որոնք օժտված են վերահսկողական գործառույթներով, սակայն դրանց սահմանափակ լիազորությունները խաթարում են դրանց արդյունավետությունը: Այնուամենայնիվ, քանի որ գործընթացը դեռևս սկզբնական փուլում է, դժվար է գնահատել նոր կառավարման մեխանիզմի բարեվարքությունը:

Նշանակման և սեփական դիմումի համաձայն ազատման (փաստացի՝ գործատուի կողմից ազատման) գործելակերպը մնում է խնդրահարույց. Կրթության տեսչական մարմին հաղորդված և նրա կողմից բացահայտված խախտումների շարքում այս խախտումն ամենատարածվածն է և տարիներ շարունակ մնում է նույն մակարդակում:[24] ԹԻՀԿ կողմից վերջերս անցկացված հարցման արդյունքներով հարցվածների մոտ 22%-ը նշել է, որ աշխատանք ստանալու համար իրենցից վճար են պահանջել, իսկ մոտ 33%-ը նշել է ուսուցիչների նկատմամբ ղեկավարության կողմից ընտրողական վերաբերմունքը՝ կախված անձնական հարաբերություններից կամ այլ կապերից:

24 Տեսչական մարմնի զեկույցները հասանելի են https://www.eib.am/public/hy կայքում և նրանց հետ 2024-2025թթ. մեր գրագրությունում:

Ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրումը շարունակում է մնալ մշտական խնդիր: Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) կողմից իրականացվող արտաքին գնահատումները ցույց են տալիս դպրոցական գնահատականների և արտաքին գնահատումների միջև հաստատուն անհամապատասխանություն: Ներքին և արտաքին գնահատումների միջև մոտավորապես 20% անհամապատասխանությունը մնում է հաստատուն մշտադիտարկման ողջ ժամանակահատվածում: Դպրոցական գնահատումը համակարգային կերպով ուռճացված է՝ շատ ավելի հաճախ հանդիպելով ցածր առաջադիմության և բարձր գնահատականների դեպքում, քան միջին գնահատականների, ինչը հստակ վկայում է կոռուպցիայի բարձր ռիսկի մասին բարձր գնահատականների դեպքում, իսկ ցածր առաջադիմությամբ սովորողների դեպքում՝ կրթական իրավունքների խախտման մասին, ովքեր ենթարկվում են դպրոցական ուսուցման ընթացքում «քարշ տալու» վտանգին՝ չստանալով պատշաճ կրթություն: ԹՀԻԿ կողմից անցկացված նույն հարցման մեջ մոտ 24%-ը նշել է, որ դասապատրաստում իրականացնող ուսուցիչները սովորողներին գնահատում է սուբյեկտիվորեն՝ կախված նրանից, թե արդյոք սովորողն իրենց մոտ անցնում է դասապատրաստում, թե ոչ: Նրանք անհիմն կերպով արձանագրում են առաջին խմբի առաջադիմությունը և թերագնահատում երկրորդին՝ այդպիսով առաջարկելով մասնավոր դասապատրաստում: Միևնույն ժամանակ ծնողների կողմից սովորողների առաջադիմությունն անհիմն արձանագրելու խնդրանքները կազմում են 39%, իսկ գործընկերների կողմից՝ 31%:

Գնահատման համակարգի թերությունները վերջապես հայտնվեցին Հայաստանում կրթության զարգացման հիմնական դոնորների ուշադրության կենտրոնում:[25] Համաշխարհային բանկի պետական ֆինանսների ուսումնասիրության եզրակացությունը հետևյալն է. «Սովորողների գնահատման ազգային համակարգի և դպրոցների ֆինանսավորման բանաձևի բարելավումները պետք է հասցեագրեն կրթության արդյունքների հետ կապված մարտահրավերները: Գործող գնահատման համակարգը պետք է փոփոխվի՝ դպրոցների և անհատների կատարողականը վերահսկելու և քաղաքականության մշակման գործընթացի համար բավարար տվյալներ տրամադրելու նպատակով: Այս առնչությամբ զեկույցն առաջարկում է մշակել գնահատման ազգային համակարգ և կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (EMIS)՝ գնահատման և հաշվետվողականության գործընթացը բարելավելու և կատարողականի վրա հիմնված մոդելը ապահովելու և բարելավմանն ուղղված միջամտությունները թիրախավորելու համար անհրաժեշտ տվյալները տրամադրելու նպատակով»: Ավելի վաղ նույն եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվել էին նաև ՅՈՒՆԻՍԵՖ-

25 Հայաստանի պետական ֆինանսների ուսումնասիրություն. հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացում
https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/3f756e67-8518-4c10-b3d0-c85c66cb5324/content

ի վերը մեջբերված գնահատման մեջ, սակայն այդ առաջարկությունների իրականացման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի հաղորդվել:

Սույն մշտադիտարկման գնահատումը ենթադրում է, որ ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրումը, զուգորդված դասարանի ուսուցիչների կողմից չկարգավորված դասապատրաստման հետ, փոխադարձաբար խթանում են են կործանարար ազդեցությունը կրթության որակի և հասանելիության վրա: Չնայած կրկնուսուցումը իրականացնող դասարանի ուսուցչի բարեվարքության հետևանքով կրթության որակին հասցված լուրջ վնասին, այն օրենսդրությամբ կարգավորված չէ և չի քննարկվում 2023թ. փետրվարին ընդունված բարեվարքության կանոններում:[26] Ուսումնական առաջադիմության անհիմն արձանագրումը սահմանված չէ որպես հատուկ թիրախ վերահսկողության մանդատ ունեցող մարմինների կողմից ստուգումների համար:

Վերջին բարեփոխումների համաձայն, մինչև 5-րդ դասարանի սովորողների գնահատումը կիրականացվի ձևավորող մոտեցմամբ: Դպրոցում անբավարար գնահատականներ չեն լինի, և բոլոր սովորողները կտեղափոխվեն հաջորդ դասարան: Կարողունակությունների վրա հիմնված մոտեցման նպատակն է սովորողների ուսումնառության ավելի բարձր մակարդակ ապահովելը: Հաշվի առնելով գնահատման հարցում բարեվարքության պակասը և ուսուցիչների առնվազն մեկ երրորդի ցածր մասնագիտական կարողությունները, այս միջոցառումը թվում է վաղաժամ, քանի որ այն թույլ է տալիս, որ առաջադիմության անհիմն արձանագրումներն ավելի երկար և հեշտությամբ մնան աննկատ:

Պատահականորեն ընտրված դպրոցների ներքին գնահատման զեկույցների ուսումնասիրությունը բազմաթիվ անհամապատասխանություններ է վերհանում:[27] Հատկանշական է, որ այս զեկույցներում նշվում է կրկնուսուցման իսպառ բացակայության մասին, ինչը շատ հեռու է իրականությունից: Կրկնուսուցումը ոչ միայն լայնորեն տարածված է, այլև դասարանի ուսուցիչների կողմից կրկնուսուցումը շարունակվում է նախկինի պես, այսինքն՝ այն այլևս անգամ չի ընկալվում որպես էթիկայի խախտում, առավել ևս՝ որպես բարեվարքության խախտում: Գնահատման գործընթացի թերությունների հետ մեկտեղ, կրկնուսուցումը լուրջ սպառնալիք է կրթության որակի և հասանելիության համար:

[26] ՀՀ Ուսուցիչների բարեվարքության կանոններ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://iravaban.net/414012.html

27 https://lib.armedu.am/article/6473 ներքին գնահատման շտեմարան

Ամփոփում

Հայաստանը ներկայումս անցնում է կրթական լայնածավալ բարեփոխումների ևս մեկ՝ հավակնոտ նպատակների փուլով: Բարեփոխումն ընդգրկում է ՀԸԳՀ-ով սահմանված երեք հիմնական պարտավորությունների ոլորտները՝ ներառելով կառավարման մարմինների, նրանց լիազորությունների և առաքելությունների փոփոխությունները, ինչպես նաև նախաձեռնություններ՝ կրթության որակի բարելավման ուղղությամբ: Բարեփոխման շրջանակն անդրադառնում է համակարգային խնդիրների, կառավարման մարմինների կառուցվածքի և ընդհանուր կրթության որակին վերաբերող հարցերին :

Մի քանի ոլորտներում նկատվում են նշանակալի ձեռքբերումներ: Կարևոր ձեռքբերումներից մեկը հանրակրթության կառավարման ոլորտում քաղաքական չեզոքության վերականգնումն է, ինչի մասին են վկայում վերջին ընտրությունների դիտորդական զեկույցները: Բացի այդ, ներդրվել են ֆինանսական հաշվետվողականության մեխանիզմներ՝ ապահովելով ավելի մեծ ֆինանսական և գործառնական թափանցիկություն:

Նոր կրթական չափորոշիչները խոստումնալից են կրթության որակի աստիճանական բարելավման տեսանկյունից, եթե դրանք ներդրվեն հանրապետության ողջ տարածքով և ուղեկցվեն ուսուցիչների մասնագիտական զարգացման խիստ համակարգով: Առաջընթացի կարևոր քայլ է նաև ուսուցիչների միասնական և պարտադիր հավատարմագրման քննության ներդրումը: Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնը (ԿԶՆԱԿ) ակտիվորեն նպաստել է ուսուցիչների և տնօրենների մասնագիտական զարգացմանը՝ մշակելով ուղեցույցներ և նյութեր, ինչպես նաև դպրոցներում խթանելով լավ կառավարման մեխանիզմները:

Սակայն, չնայած բարեփոխումների այս ծավալին, կրթության որակի և հասանելիության ոլորտում առարկայական բարելավումներ չեն արձանագրվել: Հիմնական ցուցանիշները՝ ուսումնառության աղքատությունը (թերուսություն), միջազգային թեստերի արդյունքները և ընդունելության ծավալները, մնում են անփոփոխ: Համակարգային ցուցանիշներում, ինչպես օրինակ՝ գնահատման հուսալիության և ուսուցիչների մասնագիտական որակների ցուցանիշներում, նույնպես նշանակալի բարելավում չէ նկատվում: Ըստ էության, երեխաների կրթության մակարդակի նշանակալի բարելավում տեղի չի ունեցել: Կառավարության ներկայացուցիչները առաջընթացի բացակայությունը հիմնականում վերագրում են բարեփոխումների նկատմամբ դիմադրությանը, որն առկա է հատկապես գործող մասնագետների և կիրարկողների շրջանում: Հարցազրույցները վկայում են, որ որոշումներ կայացնողներն այս դիմադրությունը համարում են փոփոխության հիմնական

խոչընդոտը: Ի պատասխան՝ իշխանությունները որդեգրել են կիրարկման կենտրոնական՝ վերևից ներքև մոտեցումը: Սակայն այս մոտեցումը հղի է ձևական և մակերեսային համապատասխանությունն ամրապնդելու վտանգով, բովանդակային փոփոխություն իրականացնելու փոխարեն: Հիմնական շահագրգիռ կողմերի՝ ուսուցիչների, ծնողների և սովորողների հետագա օտարացումը կարող է նվազեցնել բարեփոխումների նկատմամբ նրանց պահանջատիրության զգացումը՝ հարդյունս խաթարելով դրանց արդյունավետությունը:

Կրթության հասանելիությանը առանձնակի մտահոգիչ է, քանի որ չեն գործադրվել որևէ զգալի, չափելի և նպատակային ջանքեր՝ ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաների կրթական մարգինալացումը վերացնելու ուղղությամբ: Որոշում կայացնողները չունեն, և կարծես, չեն էլ փորձում ունենալ՝ կրթության հասանելիության սոցիալական չափման հուսալի տվյալներ, որպեսզի կարողանան մշակել թիրախային ռազմավարություններ: Չի ճանաչվում այն երեխաների կրթության իրավունքը, որոնք վերջին տարիներին անցել են կրթական համակարգով՝ առանց համապատասխան գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու: Երկարօրյա ուսոցման ծրագիրը, որը նպատակ ունի վերաինտեգրել «դուրս մնացած» սովորողներին, բավարար չէ և չունի հաշվետվողականության հիմնական մեխանիզմներ՝ դրա արդյունավետությունն ապահովելու և ըստ անհրաժեշտության զարգացնելու համար:

Այս դիմադրությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է բարեփոխումների հարացույցի փոփոխություն՝ կենտրոնանալով երեխաների կրթության և որակյալ կրթության իրավունքի վերականգնման վրա: Թե՛ տեսական, թե՛ փորձով հաստատված մեծաքանակ ապացույցները, ներառյալ սույն մշտադիտարկման արդյունքները, վկայում են, որ համակարգային անարդյունավետության պատճառը համակարգային բարեվարքության պակասն է: Առանց կրթական համակարգում բարեվարքության խախտումների վերացմանն ուղղված նպատակային և կիրարկելի միջոցառումների հաստատուն բարեփոխումները կմնան անիրագործելի:

Առաջարկություններ

Առաջարկությունները ներկայացված են ըստ պատասխանատու մարմինների և առաջնահերթությունների:

Առաջարկություններ ՀԸԳՀ կողմերին՝ Հայաստանի կառավարությանը և ԵՄ-ին:

- **Առաջնահերթություն տալ բարեվարքությանը կրթության ոլորտում.** Ճանապարհային քարտեզում, ԿՁՊԾ-ում և Հակակոռուպցիոն ռազմավարությունում ներառել համակարգային բարեվարքության վերականգնման գործուն միջոցառումներ: Ներկայումս ճանապարհային քարտեզում ներառված միջոցառումները բավարար հստակ չեն և չեն անդրադառնում բարեվարքության խնդրին:
- **Ապահովել ներառականություն նաև ընդունելությունից հետո.** Ներգրավել համակարգից դուրս մնացած սովորողներին, որոնք անցել են համակարգով առանց որակյալ կրթություն ստանալու՝ ԿՁՊԾ-ում , ճանապարհային քարտեզում և Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունում նախատեսելով թիրախային միջոցառումներ: Օժանդակել «կրթության իրավունքի վերականգնման» լայնածավալ ծրագրերին:

Առաջարկություններ Հայաստանի Կառավարությանը.

Օժանդակել համակարգային բարեվարքությանը

- Ուսուցիչների կողմից կրկնուսուցում առաջարկելը կամ սովորողներին ուղղորդելը կրկնուսուցմանը որակել որպես բարեվարքության լուրջ խախտում և սահմանել կատարման ենթակա վարչական միջոցներ: Դիտարկել օրենքով արգելքների սահմանումը, ինչպես Վրաստանում, Հարավային Կորեայում և այլ երկրներում:
- Ակադեմիական առաջադիմության անհիմն արձանագրումը որակել որպես բարեվարքության լուրջ խախտում՝ կիրառելով գործող վարչական միջոցները, հատկապես այն դեպքերում, երբ այն կոծկում է սովորողի ցածր առաջադիմությունը:
- Տեսչական մարմնին օժտել բարեվարքության խախտումները բացահայտելու լիազորությամբ, ինչպիսիք են թերի դասավանդումը և ակադեմիական առաջադիմության անհիմն արձանագրումը:

Բարելավել ներառականությունը

- Վերանայել և բարելավել երկարօրյա ուսուցման ծրագրերը ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար՝ ապահովելով հաշվետվողականություն բոլոր փուլերում՝ սովորողների ընդունելություն, առաջադիմության գնահատում և արդյունքների վերլուծություն: Ծրագիրն ընդլայնել ՝ հնարավորինս արագ հասցեագրելու լայն տարածում ունեցող կարիքները: Ընդլայնել լուծումները՝ ներգրավելով արտաքին մասնագետների,

ներդնելով ամառային դպրոցներ, կիրառելով զարգացող երկրների լավագույն փորձը:

- Իրականացնել ուսումնասիրություններ՝ բացակայությունների սոցիալական ասպեկտների վերաբերյալ և մշակել թիրախային աջակցության ծրագրեր՝ կանխելու սովորողների՝ դպրոցից դուրս մնալը ֆինանսական խնդիրների պատճառով: Ստեղծել արդյունավետ մեխանիզմ՝ դպրոցից դուրս մնացած երեխաներին նույնականացնելու համար՝ ապահովելով ավելի արդիական տվյալներ, քան առկա համակարգերը:

Բարձրացնել կրթության որակը

- Բարեփոխել Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) գնահատման մեխանիզմները՝ ներդնելով ավելի մասնագիտական, բազմաշերտ և բազմաբնույթ գնահատման ձևաչափեր: Ապահովել սովորողների ուսումնառության իրական ժամանակում հետևելու հնարավորությունը՝ փաստահեն քաղաքականության որոշումներ և նպատակային միջամտություններ իրականացնելու համար:
- Ստեղծել իրական ժամանակում միջամտության մեխանիզմներ՝ մասնավորապես այն դեպքերում, երբ կրթության որակը նվազում է:
- Սկսած 2025-2026 ուսումնական տարվանից՝ ուսուցիչների ատեստավորումը դարձնել պարտադիր և սահմանել ատեստավորման նվազագույն շեմ:
- Մշակել և ներդնել ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր՝ ուսուցիչներին աջակցելու նոր կրթական չափորոշիչների յուրացման գործում, մասնավորապես՝ գնահատման ոլորտում:

Այս առաջարկությունները նպատակ ունեն խթանել համակարգային բարեվարքությունը, ներառականությունը և կրթության որակը՝ ապահովելով նշանակալի և կայուն առաջընթաց Հայաստանի կրթական համակարգում:

Հարցազրույցներ և հանդիպումներ

Մշտադտարկման գործընթացի ընթացքում մենք հարցազրույցներ և քննարկումներ ենք ունեցել կրթական համայնքի ներկայացուցիչների (ուսուցիչների, տնօրենների և ոլորտի փորձագետների), քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև պետական մարմինների և գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ ԿԳՄՍ նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Համաշխարհային բանկի, ԿԶՆԱԿ-ի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» և «Ասպարեզ» լրագրողների ակումբի հետ:

Երախտիքի խոսք

Սույն մշտադիտարկումն իրականացվել է GOPA-ի դրամաշնորհի միջոցներով: Հեղինակը ցանկանում է շնորհակալություն հայտնել միջնակարգ դպրոցների ուսուցիչներին, ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության պետ տկն. Թամարա Սարգսյանին, ԿՁՆԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար պարոն Արտաշես Թորոսյանին, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ծրագրերի ավագ տնօրեն տնկ. Նարինե Թադևոսյանին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջազգային կոնվենցիաների վարչության պետ տկն. Ժաննա Հակոբյանին, կրթության փորձագետներ՝ գիտությունների դոկտոր Սերոբ Խաչատրյանին, Զինա Աբրահամյանին, գիտությունների դոկտոր Դավիթ Ամիրյանին և Մուշեղ Եկմալյանին արժեքավոր քննարկումների համար: Հեղինակը շնորհակալություն է հայտնում մի շարք կազմակերպությունների, որոնք պատրաստակամորեն մեզ հետ կիսվել են իրենց հետազոտություններով և գիտելիքներով, մասնավորապես՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին», ԹԻՀԿ-ին, Շիրակի մարզի «Ասպարեզ» լրագրողների ակումբին և «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին»: